ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
2021, № 1, 52-60 *Տնտեսագիտություն*
https://doi.org/10.46991/BYSU:G/2021.12.1.052

ՀՆԱ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԳԵՎՈՐԳ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Համախառն ներքին արդյունքի կառուցվածքի բարելավումը ժամանակակից տնտեսությունների կայուն և արդյունավետ զարգացման հիմնական նախապայմաններից է, որը թույլ է տալիս ապահովել տնտեսության առաջանցիկ աճ և բարձրացնել մրցունակությունը, ձևավորել մրցակցային առավելություններ, արդիականացնել տնտեսական համակարգը և լուծել սոցիալ-տնտեսական կարևոր այլ հիմնախնդիրներ: Արդի փուլում Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքը բարելավելու և դիվերսիֆիկացնելու խնդիրները կարևոր նշանակություն ունեն ոչ միայն սեփական դիրքերն ամրապնդելու, այլ նաև տնտեսության հարկային ներուժն առավելագույնս օգտագործելու և պետական եկամուտներն ավելացնելու տեսանկյունից:

Հարկ է նշել, որ ՀՆԱ-ի կառուցվածքի բարելավումը կարևորագույն պայման է ոչ միայն տնտեսական համակարգի արդիականացման, մրցակցային առավելությունների ձևավորման, ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծման, այլ նաև պետական եկամուտների հավաքագրման և այլ խնդիրների լուծման համար: Միևնույն ժամանակ, այն էական նշանակություն ունի նաև հարկային բեռի մակարդակի սահմանման և հատկապես դրա բաշխման գործում: Վերջինիս օպտիմալ մակարդակի ձևավորումը պետության կարևոր խնդիրներից է, քանի որ դրանով է մեծապես պայմանավորված, մի կողմից, տնտեսության բնականոն գործունեությունը և մյուս կողմից՝ պետության գործառույթների պատշաճ իրականացումը: Բացի այդ, ՀՆԱ-ի կառուցվածքի ազդեցությունը չափազանց մեծ է նաև երկրում արձանագրվող տնտեսական աճի ցուցանիշի որակի վրա: Հետևաբար, դրա փոփոխության և տնտեսական աճի որակի բարելավման ուղղությամբ քայլերը պետք է հետապնդեն ոչ միայն տնտեսության զարգացման, այլ նաև հարկային բեռի բաշխման և տնտեսական միջավայրի բարելավման նպատակ:

Ընդհանուր առմամբ, հարկային բեռի մակարդակի սահմանման, ինչ-

պես նաև տնտեսության տարբեր հատվածների վրա դրա բաշխման հիմնախնդիրները կարևոր նշանակություն ունեն ցանկացած երկրի տնտեսության բնականոն գործունեության ապահովման, ինչպես նաև զարգացման նախադրյալների ձևավորման տեսանկյունից: Վերջիններիս արդյունավետ լուծումը կարող է նպաստել ոչ միայն տնտեսական միջավայրի բարելավմանը, այլ նաև հարկային եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացմանը: Ակնհայտ է, որ հարկային բեռի գնահատման և բաշխման հարցերը պետք է դառնան ոչ միայն հարկային, այլ նաև ընդհանուր տնտեսական քաղաքականության կատարելագործման և դրա արդյունավետության բարձրացման առանցքային ուղղություններից: Ընդ որում, դրա կարևորությունը պայմանավորված է ոչ միայն բյուջետային եկամուտների համալրման, այլ նաև տնտեսական գործունեության համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորման և դրանց շարունակական զարգացման անհրաժեշտությամբ: Հետևաբար, կարելի է պնդել, որ ՀՆԱ-ի կառուցվածքի բարելավումը հարկային բեռի համաչափ բաշխման կարևոր ուղիներից է, որը, անշուշտ, պետք է հիմնված լինի համակողմանի գնահատականների վրա և ունենա համապատասխան գիտական հիմնավորվածություն: Մյուս կողմից, պետությունը, սահմանելով հարկային բեռի մակարդակը, պետք է հաշվի առնի նաև տնտեսության ձևավորված կառուցվածքը: Այլ կերպ ասած՝ հարկային բեռի մակարդակը սահմանելիս պետք է հաշվի առնել տնտեսության ներուժային հնարավորությունները, տնտեսական գործունեության իրականացման պայմանները, գործարար միջավայրի առանձնահատկությունները, բնակչության սոցիալական բարեկեցության մակարդակն ու մի շարք այլ գործոններ:

Հարկային բեռի մակարդակի վրա, ի թիվս այլ գործոնների, հատկապես կարևոր ազդեցություն ունի համախառն ներքին արդյունքի կառուցվածքում հարկազատված ոլորտների տեսակարար կշիռը: Այս խնդիրը բավականաչափ հրատապ և արդիական է Հայաստանի Հանրապետությունում: Ինչպես նկատում ենք գծապատկեր 1-ի տվյալներից, հանրապետության համախառն ներքին արդյունքի կառուցվածքում հատկապես մեծ է ծառայությունների ոլորտի տեսակարար կշիռը, որի մասնաբաժինը 2017-2019 թվականներին կազմել է՝ համապատասխանաբար 48.9, 50.7 և 52.4 տոկոս: Գյուղատնտեսության տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքի կառուցվածքում տատանվում է 12 տոկոսի շրջանակներում: Նշված ոլորտների առանձնացումը հատկապես պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանք հարկման տեսանկյունից գտնվում են այլ պայմաններում:

Գծապատկեր 1

Տնտեսության ոլորտների մասնաբաժինը ՀՆԱ-ի կազմում 2017-2021 թվականներին[1]



Մասնավորապես, եթե գյուղատնտեսությունը գրեթե ազատված է հարկերից, ապա ծառայությունների մի շարք տեսակների նկատմամբ կիրառվում է սահմանափակ հարկում: Կրթական և բժշկական ծառայությունների մատուցումը հանրապետությունում ազատված է ավելացված արժեքի հարկից, իսկ հանգստի և զվարճանքի կազմակերպման հետ կապված մի շարք ծառայությունների մասով կիրառվում են հարկման այլ մոտեցումներ: Ընդ որում, պատահական չէ հանգստի և զվարճանքի ծառայությունների առանձնացումը, քանի որ վերջին տարիներին բավականին մեծ է դրանց տեսակարար կշիռը ծառայությունների կառուցվածքում: Միայն 2019 թվականին ծառայություններն աճել են 15 տոկոսով, ինչին հիմնականում նպաստել են մշակույթ, զվարճություններ և հանգիստ ենթաճյուղը՝ 5 տոկոսային կետով (աճը՝ 22.3 տոկոս), ֆինանսական և ապահովագրական գործունեությունը՝ 3.4 տոկոսային կետով (աճը՝ 16.5 տոկոս), ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտը՝ 2.2 տոկոսային կետով (աճը՝ 26.1 տոկոս): Նշվածներից առաջինում գերակշռում է խաղային բիզնեսը, որն ազատված է ավելացված արժեքի հարկից և գործում է պետական տուրքի և շահութահարկի դաշտում, իսկ ֆինանսական և ապահովագրական գործունեության տեսակներից բանկային ծառայություններն ազատված են ավելացված արժեքի հարկից: Ինչ վերաբերում է կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտին, ապա այստեղ էլ զգալիորեն մեծ են ստվերային շրջանառության ծավալները: Այլ կերպ ասած՝ նշված ոլորտները, իրենց նպաստը բերելով տնտեսական աճին, համարժեք ազդեցություն չեն ունենում հարկային մուտքերի ավելացման վրա: Ինչպես նկատում ենք գծապատկեր 2-ի տվյալներից, 2017-2019 թվականնե-

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի ուղերձ. 2021 թվականի համար ներկայացված է կանխատեսվող ցուցանիշը:

ին հանրապետությունում գրանցված տնտեսական աճին ամենաշատը նպաստել է ծառայությունների ոլորտը՝ մոտ 5 տոկոսային կետով:

Գծապատկեր 2

Տնտեսության առանձին ոլորտների նպաստելը տնտեսական աճին 2017-2021 թվականներին[2]



Ըստ էության, նաև նշված հանգամանքով է պայմանավորված այն, որ Հայաստանի Հանրապետությունում տնտեսական աճի և հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշի փոփոխության միջև կայուն օրինաչափություններ գոյություն չունեն, ինչում համոզվելու համար դիտարկենք վերջին 6 տարիներին արձանագրված պատկերը: Ինչպես նկատում ենք աղյուսակ 1-ի տվյալներից, 2013-2019 թվականներին հանրապետությունում պարբերաբար գրանցված տնտեսական աճի պայմաններում այն կայուն ազդեցություն չի ունեցել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության վրա: Նշյալ ժամանակահատվածում, չնայած տնտեսական աճի ցուցանիշի աճի տեմպերի փոփոխություններին, հարկեր/ՀՆԱ ցուցանիշը հիմնականում դրսևորել է կայուն միտում՝ գտնվելով 22 տոկոսի սահմաններում:

Աղյուսակ 1

Տնտեսական աճի և հարկեր/ՀՆԱ ցուցանիշի դինամիկան ՀՀ-ում 2013-2019 թթ. (տոկոս)[3]

	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Տնտեսական աճ	3.3	3.6	3.2	0.2	7.5	5.2	7.6
Հարկեր/ՀՆԱ	22	22	21.6	21.8	21.3	21.4	22.3

[2] Տե՛ս նույն տեղը:

[3] Աղյուսակը կազմվել է Հայաստանի վիճակագրական տարեգրքի 2017 և 2019 թվականների (www.armstat.am) և ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի ուղերձի տվյալների հիման վրա:

Ձևավորված պատկերը, ակնհայտորեն, նաև ՀՆԱ-ի կառուցվածքի և դրանում ոչ հարկունակ ոլորտների զգալի տեսակարար կշռի հետևանք է: Կարծում ենք՝ նաև այդ հանգամանքով է պայմանավորված այն, որ տնտեսական աճի որակական ազդեցությունը տնտեսական զարգացման մակարդակի վրա խիստ ցածր է: Անշուշտ, հարկային բեռի ցածր մակարդակի վրա ազդեցություն է թողնում նաև հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով բյուջետային եկամուտների կորստի բավականաչափ մեծ ծավալը: Համաձայն ՀՀ կառավարության գնահատականների՝ 2021 թվականին միայն ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի գծով գործող հարկային արտոնությունների հետևանքով բյուջետային եկամուտների կորուստը կկազմի 451.1 մլրդ դրամ, ինչը հավասար է հարկային եկամուտների 30,05%-ին և ՀՆԱ-ի 6,7 տոկոսին[4]: Անշուշտ, դա բավականաչափ մեծ ծավալ է հատկապես ներկա ֆինանսական սուղ հնարավորությունների պայմաններում: Հատկապես մտահոգիչ է այն իրողությունը, որ դրանց ծավալները վերջին տարիներին արձանագրում են աճի կայուն միտումներ: Ըստ էության, դա կարող է արդարացված լինել միայն հարկային արտոնությունների տրամադրման արդյունքում ստացվելիք համարժեք օգուտներ ապահովելու պարագայում: Ակնհայտ է, որ հանրապետությունում գործող հարկային արտոնությունների հետևանքով բյուջետային կորուստները համարժեք չեն ստացված սոցիալ-տնտեսական օգուտներին, ինչը ենթադրում է դրանց տրամադրման գործընթացի հանդեպ որակապես նոր մոտեցումների ամրագրում: Այս առումով, կարծում ենք, անհրաժեշտ է ևս մեկ անգամ իմաստավորել հարկային արտոնությունների դերն ու նշանակությունը հարկային կարգավորման գործում և ստեղծել այն նախադրյալները, որոնց առկայության պարագայում միայն դրանք կապահովեն անհրաժեշտ սոցիալ-տնտեսական էֆեկտ: Անհրաժեշտ է ապահովել հարկային արտոնությունների առավելագույն հասցեականություն և բացառել տարբեր եղանակներով դրանցից օգտվելու հնարավորությունը, իրականացնել հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով բյուջետային կորուստների չափի և ստացված սոցիալ-տնտեսական էֆեկտի համադրում՝ արդյունավետության գնահատման և չհիմնավորված արտոնություններից հրաժարվելու նպատակով: Բացի այդ, հաշվի առնելով նաև հանրապետությունում հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով բյուջետային եկամուտների կորստի տարեցտարի աճող ծավալը, կարծում ենք, ժամանակն է համակողմանիորեն վերլուծել գործող հարկային արտոնությունները՝ դրանց տեսակներից յուրաքանչյուրի հիմնավորվածութ-

[4] Տե՛ս Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի ուղերձ:

յան, արդարացիության և սոցիալական ու տնտեսական նպատակահարմարության տեսանկյունից:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում հարկային բեռի ցածր ցուցանիշը, սուբյեկտիվ գործոններից բացի, հետևանք է նաև համախառն ներքին արդյունքի կառուցվածքի և մասնավորապես դրանում հարկազատված ոլորտների մեծ տեսակարար կշռի, որոնք, մեծացնելով համախառն ներքին արդյունքի ցուցանիշը, համապատասխան չափով չեն գեներացնում հարկային եկամուտներ: Նման իրավիճակում խիստ հրատապ է տնտեսության կառուցվածքային բարեփոխումների իրականացման միջոցով հարկային բեռի բաշխման կառուցակարգերի մշակումը: Այս տեսանկյունից առաջիկա տարիներին հարկեր/ՀՆԱ ցուցանիշի աստիճանական բարձրացումը պետք է իրականացվի ինչպես համախառն ներքին արդյունքի կառուցվածքի բարելավման, այնպես էլ տնտեսության հարկային ներուժի լիարժեք օգտագործման, գործող հարկային արտոնությունների վերանայման, հարկային եկամուտների գեներացման նոր ռեզերվների բացահայտման և մի շարք այլ ուղղություններով:

ՀՀ տնտեսական զարգացման ներկա փուլում կարևոր նշանակություն ունեն ոչ միայն տնտեսական աճի ապահովումը, այլ նաև դրա որակի այնպիսի փոփոխությունը, որը հնարավորություն կտա առավել առարկայական դարձնելու տնտեսական աճի ազդեցությունը: Այս տեսանկյունից իրականացվելիք տնտեսական քաղաքականության նպատակային թիրախ պետք է դառնա հարկունակ ոլորտների զարգացումը՝ միաժամանակ համեստ դերակատարում վերապահելով ՀՆԱ-ի ձևավորման գործում շոշափելի ավանդ չունեցող և հարկազատված ոլորտներին: Այլ կերպ ասած՝ կարևորելով հանդերձ երկրում տնտեսական աճի ապահովումը, միևնույն ժամանակ պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկել ՀՆԱ-ի կառուցվածքի բարելավման ուղղությամբ, ինչը ոչ միայն կնպաստի հարկային բեռի համաչափ բաշխմանը և բյուջետային եկամուտների ավելացմանը, այլ նաև նոր որակ կհաղորդի տնտեսական աճին՝ ապահովելով դրա ներառականության և հասարակական բարեկեցության վրա ազդեցության առավել բարձր աստիճան: Համախառն ներքին արդյունքի կառուցվածքում ոչ հարկունակ ոլորտների զգալի տեսակարար կշիռը ոչ միայն չի նպաստում տնտեսական աճին համահունչ հարկային եկամուտների ավելացմանը, այլ նաև հանգեցնում է հարկային բեռի անհամաչափ բաշխմանը:

Հանրապետությունում տնտեսության կառուցվածքային փոփոխությունների իրականացման և համախառն ներքին արդյունքի կառուցվածքի բարելավման միջոցով հարկային բեռի բաշխման ուղղությամբ համապատասխան մոտեցումների մշակումը պետք է ունենա գիտական հիմնավորվածություն՝ նախ և առաջ ենթադրելով հետևյալ քայլերի իրականացումը:

• Տնտեսական աճի և դրա որակի վրա տնտեսության կառուցվածքի ազդեցության գնահատում: Տնտեսական քաղաքականության հիմնական նպատակ պետք է դառնան ոչ միայն տնտեսական աճի ապահովումը, այլ նաև դրա որակի բարելավումը: Այլ կերպ ասած՝ պետք է թիրախավորվեն տնտեսության այն ոլորտները, որոնց զարգացման միջոցով հնարավոր կլինի երկրում ապահովել տնտեսական աճ: Դրանց զարգացումը կնպաստի նաև արտաքին շուկաներում երկրի մրցունակությանը: Այդ ոլորտները պետական եկամուտների համալրման տեսանկյունից կունենան առաջնային նշանակություն, ինչպես նաև լոկոմոտիվի դեր կխաղան տնտեսության այլ ճյուղերի և տնտեսական գործունեության տեսակների համար՝ համապատասխան մուլտիպլիկատորի էֆեկտի ապահովմամբ: Հակառակ պարագայում տնտեսական աճ ձեռք բերելը կդառնա ինքնանպատակ՝ չհանգեցնելով երկրի տնտեսական զարգացման, հասարակության ստվար հատվածի համար կլինի վիճահարույց, իսկ մասնագիտական շրջանակների համար՝ ընդամենը վիճակագրական ցուցանիշ:

• Համախառն ներքին արդյունքի կառուցվածքի և հարկային բեռի մակարդակի միջև գոյություն ունեցող կապերի վերլուծություն: Վերջինս նախ և առաջ ենթադրում է տնտեսության տարբեր ոլորտների վրա հարկային ճնշման իրական մակարդակի գնահատում՝ հարկային բեռի բաշխման նպատակով: Այս համատեքստում հատկապես պետք է կարևորել տնտեսության առանձին ոլորտներում տնտեսական գործունեության շահութաբերության մակարդակի գնահատումը, որը պետք է կարևոր հիմք դառնա ոչ միայն դրանցում հարկման մակարդակի սահմանման, այլ նաև տնտեսական միջավայրի բարելավման համար: Տվյալ խնդրի կարևորությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն հարկային, այլ նաև ներդրումային քաղաքականության տեսանկյունից: Խնդիրն այն է, որ առ այսօր չկան հիմնավորված գնահատականներ և դրանց վրա կատարված հաշվարկներ ու ձևավորված պատկերացումներ ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում շահութաբերության մակարդակի վերաբերյալ: Բնականաբար, նման պայմաններում հարկային բեռի մակարդակի սահմանումը ոչ միայն չի կարող ունենալ գիտական հիմնավորվածություն, այլ նաև ուղղակիորեն կխաթարի հարկման արդարացիության սկզբունքը:

• Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի վրա ստվերային տնտեսության ազդեցության գնահատում և հարկունակ ստվերի կրճատման միջոցով այդ ցուցանիշի բարձրացման հնարավորությունների բացահայտում: Անշուշտ, ստվերային տնտեսության դեմ պայքարը չպետք է դիտարկվի միայն պետական եկամուտների ավելացման համատեքստում: Այն նախ և առաջ երկրում մրցակցային միջավայրի բարելավման հինական նախապայմաններից է: Միևնույն ժամանակ, հարկային քաղաքականության շրջանակներում ստվերային տնտեսության դեմ պայքարի

քայլերի և միջոցառումների մշակմանը պետք է նախորդի ստվերային տնտեսության չափերի և կառուցվածքի գնահատումը՝ հարկունակ ստվերի բացահայտման նպատակով: Խնդիրն այն է, որ ստվերային տնտեսությունը բազմաշերտ է, և դրա ոչ բոլոր սեգմենտներն են պարունակում հարկային եկամուտների ավելացման լուրջ ռեզերվներ: Այս առումով անհրաժեշտ է հստակ պատկերացումներ ձևավորել ստվերային տնտեսության դեմ պայքարի ուղղությունների և հարկային մուտքերի հնարավոր աճի վերաբերյալ:

- Հարկային բեռի բաշխման վրա հարկային արտոնությունների բացասական ազդեցության գնահատում: Այս համատեքստում հատկապես պետք է վերանայել և վերստին քննարկել հարկային արտոնությունների տրամադրման հիմնական նպատակը՝ տնտեսական և սոցիալական խնդիրների հստակ տարբերակմամբ: Միևնույն ժամանակ, անկախ վերջիններիս տրվող նախապատվությունից, ցանկացած հարկային արտոնություն տրամադրելու հետևանքով առաջացած բյուջետային կորուստը պետք է առնվազն համարժեք լինի միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում ստացված տնտեսական և սոցիալական օգուտներին: Հակառակ պարագայում այն կդառնա բյուջետային եկամուտների չարդարացված փոշիացում:
- Հարկային բեռի օպտիմալ մակարդակի սահմանման և դրա բաշխման նպատակով անհրաժեշտ է իրականացնել ըստ առանձին հարկատեսակների, տնտեսության ոլորտների և գործունեության ուղղությունների հարկային բեռի բաշխման վերլուծություն: Խնդիրն այն է, որ վերջին տարիներին հանրապետությունում միայն երեք հարկատեսակների՝ ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի և եկամտային հարկի գծով մուտքերն ընդհանուր հարկային եկամուտների ծավալում տատանվում են 70 տոկոսի շրջանակներում: Հաշվի առնելով այն, որ անուղղակի հարկերի գծով փաստացի բեռն ընկնում է վերջնական սպառողների վրա, կարող ենք արձանագրել, որ հանրապետությունում հարկային բեռի հիմնական ծանրությունը կրում են ֆիզիկական անձինք: Այդ փաստը, անշուշտ, պետք է որոշակի մտահոգությունների առիթ տա հատկապես հանրապետությունում ազգաբնակչության ներկա սոցիալական վիճակի պայմաններում: Այս առումով հարկային բեռի մակարդակը պետք է գնահատել ըստ առանձին հարկատեսակների, տնտեսության ոլորտների և գործունեության ուղղությունների, ինչը հնարավորություն կտա ուրվագծելու դրա բաշխման և լրացուցիչ բյուջետային մուտքերի գեներացման հնարավորությունները:

Ըստ էության, վերը նշված ուղղություններով կատարվելիք քայլերի ու միջոցառումների վերջնարդյունքը պետք է դառնա ՀՀ-ում տնտեսական աճի կառուցվածքի փոփոխությունների հնարավոր ուղիների մշակումը ինչպես դրա որակի բարելավման, այնպես էլ հարկեր/ՀՆԱ ցուցանիշի բարձրացման տեսանկյունից:

Բանալի բառեր – *համախառն ներքին արդյունք, հարկային բեռ, հարկային քաղաքականություն, տնտեսական աճ, տնտեսության կառուցվածքային փոփոխություններ*

ГЕВОРГ КИРАКОСЯН – *Проблемы улучшения структуры ВВП и распределения налогового бремени в РА.* – Статья посвящена анализу взаимовлияния отраслевой структуры экономики и распределения налогового бремени. Рассмотрены изменения в отраслевой структуре валового внутреннего продукта в Армении, динамика экономического роста и влияние этих факторов на соотношение налоги/ВВП. Обосновано отрицательное воздействие необлагаемых налогом отраслей экономики на неравномерное распределение налогового бремени. Предложены возможные пути изменения структуры экономического роста в Армении как с точки зрения улучшения её качества, так и повышения показателя налоги/ВВП.

Ключевые слова: *валовый внутренний продукт, налоговое бремя, налоговая политика, экономический рост, структурные изменения экономики*

GEVORG KIRAKOSYAN – *Problems of Improving the Structure of GDP Economy and the Distribution of the Tax Burden in the Republic of Armenia*. – The article analyzes the issues of mutual influence of the sectoral structure of the economy and the distribution of the tax burden. The changes in the sectoral structure of the gross domestic product in the Republic of Armenia, the dynamics of economic growth, and their impact on the tax/GDP ratio were considered. The negative impact of non-taxable sectors of the economy on the uneven distribution of the tax burden is substantiated. Possible ways to change the structure of economic growth in Armenia were suggested in terms of both improving its quality and increasing the tax/GDP indicator.

Key Words: *gross domestic product, tax burden, tax policy, economic growth, structural changes in the economy*